

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/3

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Երևանի ավտոբուս» ՓԲԸ 23.12.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 24.11.2014 թ-ի թիվ 1521 որոշման դեմ:

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության կողմից 24.11.2014թ-ին կայացվել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1521 որոշումը (այսուհետ՝ Վարչական ակտ), որով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) առաջադրվել է 1.657.992 դրամ պարտավորության գումար:

Համաձայն Վարչական ակտի՝ Ընկերության հարկային պարտավորությունները կազմում են 1.657.992 դրամ, որից շահութահարկ 1.564.496 դրամ (2013թ. շահութահարկի հաշվարկ, 2014 թ-ի 2-րդ, 3-րդ եռամսյակների կանխավճար), եկամտային հարկ 93.496 դրամ (2014 թ-ի հոկտեմբեր ամսվա հաշվարկ):

Վարչական ակտով ներկայացված շահութահարկի վճարման պարտավորությունը չի համապատասխանում իրականությանը և չի բխում նշված հարաբերությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներից:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Նույն օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

Նշված իրավական նորմերը համադրելով բողոքարկվող Վարչական ակտին՝ պարզ է դառնում, որ հարկային մարմինը Ընկերության համար 1.564496 դրամ շահութահարկ վճարելու պարտականություն է առաջադրել՝ հիմք ընդունելով 2013թ. շահութահարկի հաշվարկը, 2014թ. 2-րդ, 3-րդ եռամսյակների կանխավճար վճարված չլինելու փաստը:

Համաձայն ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2014 թ-ի ապրիլի 30-ի թիվ 161-Ա որոշման՝ «Երևանի ավտոբուս» և «Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպվել են:

2013 թ-ի շահութահարկի հաշվարկի հիման վրա հաշվետու տարվա շահութահարկի գումարը կազմել է 2.412.552 դրամ, իսկ 2014 թ-ի կանխավճարների եռամսյակային գումարը՝ 993 դրամ: ՀՀ ՖՆ Շենգավիթի հարկային տեսչության

կողմից 04.06.2014 թ-ին տրված տեղեկանքի համաձայն «Ավտոբուս» ՓԲԸ-ն 31.12.2013 թ-ի դրությամբ ունեցել է 1.200.182 ՀՀ դրամ գերավճար: Արդյունքում պետք է բյուջե վճարվեր 1.214.356 ((2 412 552 - 1 200 182) + 993*2) դրամ: Մինչև 24.06.2014 թ-ը վճարումներ չեն կատարվել, ինչի արդյունքում հաշվարկվել է նաև 101.851 ՀՀ դրամի չափով տույժ: 2014 թ-ի հունիսի 24-ին և 25-ին «Երևանի ավտոբուս» ՓԲԸ կողմից բյուջե է վճարվել «Ավտոբուս» ՓԲԸ-ի շահութահարկի ամբողջ պարտքը՝ 1.316.207 (1.214.356 + 101.851) դրամ: Այնուհետև, 30.06.2014 թ-ին ՀՀ ՖՆ Շենգավիթի հարկային տեսչության կողմից տրվել է «Ավտոբուս» ՓԲԸ-ի հարկային քարտի մնացորդի տեղեկանք, համաձայն որի 30.06.2014թ-ի դրությամբ «Ավտոբուս» ՓԲԸ-ն շահութահարկի գծով պարտավորություն չունի:

Հարկ է նշել նաև, որ Շենգավիթի ՀՏ 2013 թ-ի նոյեմբերի 4-ին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ «Ավտոբուս» ՓԲԸ-ի՝ ՀՀ պետ բյուջեի օգտին գումար բռնագանձելու պահանջով, որտեղ հայտնել է, որ Ընկերության պարտքը 12.10.2013 թ-ի դրությամբ կազմում է 6.356.561 ՀՀ դրամ, որից հաստատագրված վճարի գծով՝ 1.642.063 ՀՀ դրամ, եկամտային հարկի գծով՝ 4.707.657 ՀՀ դրամ: Իսկ 08.09.2014 թ-ի թիվ 3997 գրությունով հայտվել է, որ «Ավտոբուս» ՓԲԸ թիվ ՎԴ/10043/05/13 կատ. թերթի շրջանակներում պետական բյուջեի հանդեպ պարտավորությունը ամբողջությամբ մարել է: Նույնիսկ հայցադիմումից ակնհայտ է, որ 12.10.2013 թ-ի դրությամբ շահութահարկի գծով պարտք չի եղել, այլապես այն նույնպես կներառվեր հայցապահանջի մեջ:

Հիմք ընդունելով նշված փաստական հանգամանքները՝ ընկերությունը գտնում է, որ Վարչական ակտով շահութահարկի գծով 1.564496 դրամ գումար վճարելու պարտականությունն ակնհայտ անհիմն է: Ընկերությունը, հաշվի առնելով նաև այս հարկատեսակի գծով գերավճարներ ունենալու փաստը, ամբողջությամբ կատարել է շահութահարկի գումարների վճարումը, մինչդեռ հարկային մարմինը կատարել է սխալ հաշվարկ, անտեսելով Ընկերության կողմից շահութահարկի գերավճար ունենալու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդված 2-րդ մասի «բ» կետի և 71-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով ընկերությունը խնդրում են ՀՀ ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության 24.11.2014թ-ի թիվ 1521 որոշումը՝ Ընկերությանը 1.564496 դրամ շահութահարկի գումար վճարելու պարտականություն առաջադրելու մասով, ճանաչել անվավեր:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետը, քննարկելով «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 21.11.2014 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 1.657.992 դրամ, որից շահութահարկ 1.564.496 դրամ (2013 թ-ի շահութահարկի հաշվարկ, 2014 թ-ի 2-րդ, 3-րդ եռամսյակների կանխավճար), եկամտային հարկ 93.496 դրամ (2014 թ-ի հոկտեմբեր ամսվա

հաշվարկ): Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 24.11.2014 թ-ին ընդունվել է թիվ 1521 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ից 1.657.992 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Որոշմամբ շահութահարկի գծով գանձման առաջադրված պարտավորությունների վերաբերյալ նշվեց հետևյալը:

ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ ՀՀ ՖՆ Շենգավիթի հարկային տեսչությունում հաշվառված «Ավտոբուս» ՓԲԸ-ն միացել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչությունում հաշվառված «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին: Վերակազմակերպումը ստացել է պետական գրանցում 20.06.2014 թ-ին:

ՀՀ ՖՆ Շենգավիթի հարկային տեսչությունից «Ավտոբուս» ՓԲԸ-ի անձնական հաշվի քարտերը և հարկային գործերը ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչություն տեղափոխվել են 2014 թ-ի նոյեմբերի 11-ին՝ շահութահարկի անձնական հաշվի քարտում 20.06.2014 թ-ի դրությամբ 2.617.219 դրամ հարկային պարտավորությամբ, այդ թվում՝ ապառք 2.414.538 դրամ, տույժ 202.681 դրամ:

ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչության պետը, հաշվի առնելով միացած կազմակերպության՝ «Ավտոբուս» ՓԲԸ-ի շահութահարկի գծով 20.06.2014 թ-ի դրությամբ ունեցած հարկային պարտավորությունը 24.11.2014թ-ին կայացրել է թիվ 1521 որոշումը «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ից 1.657.992 դրամ հարկային պարտավորության գումարը գանձելու վերաբերյալ:

Այնուհետև պարզվել է, որ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն «Ավտոբուս» ՓԲԸ-ի շահութահարկի գծով առկա պարտավորությունները վճարել է 2014 թ-ի հունիսի 24-ին և հունիսի 25-ին, հիմք ընդունելով 2014 թ-ի հունիսի 4-ին Շենգավիթի հարկային տեսչության կողմից տրված պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, համաձայն որի 31.12.2013 թ-ի դրությամբ շահութահարկի գծով առկա է եղել 1.200.182 դրամ գերավճար: Սակայն հարկ է նշել, որ Շենգավիթի հարկային տեսչության կողմից 2014 թ-ի հունիսի 4-ին տրված պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքում նշված գերավճարի գումարը չի համապատասխանել Շենգավիթի հարկային տեսչությունից ստացված շահութահարկի անձնական հաշվի քարտում արտացոլված տվյալներին:

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ-ի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Ավտոբուս» ՓԲԸ-ի շահութահարկի անձնական հաշվի քարտում 31.12.2013 թ-ի դրությամբ 1.200.182 դրամ գերավճարի փոխարեն առկա է եղել 15 դրամի տույժ:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ քննարկվող դեպքում, ըստ էության, վարչական մարմնի գործողությունների արդյունքում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին են փոխանցվել «Ավտոբուս» ՓԲԸ-ի շահութահարկի գծով առկա պարտավորությունները: Մասնավորապես, «Ավտոբուս» ՓԲԸ-ի միացման ձևով վերակազմակերպվելու և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ին միացվելու գործընթացում հաշվի են առնվել Շենգավիթի հարկային տեսչության կողմից 2014 թ-ի հունիսի 4-ին տրված պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքում նշված տվյալները, համաձայն որի 31.12.2013 թ-ի դրությամբ «Ավտոբուս» ՓԲԸ-ում շահութահարկի գծով առկա է 1.200.182 դրամ գերավճար:

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ ներկայացուցիչը նշեց, որ վերոգրյալ միացման գործընթացի ընթացքում «Ավտոբուս» ՓԲԸ-ի մոտ շահութահարկի գծով պարտավորությունների առկայության մասին հայտնի լինելու դեպքում կձեռնարկվեն համապատասխան միջոցներ վերջինիս կողմից դրանց մարման ուղղությամբ: Սակայն վարչական մարմնի, ըստ էության, ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում բողոքաբերը զրկվել է իր իրավունքն օգտագործելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ շահութահարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները ենթակա են նվազեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գանգատը բավարարել մասնակի՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շահութահարկի անձնական հաշվի քարտից նվազեցնելով կատարված վերահաշվարկի արդյունքում շահութահարկի գծով առաջադրված տույժի գումարները:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ